

ըել էր նրան՝ և ինձ թողել էր մոլահին. Հնդկական պալատի աթոռի վրայ նստողը շատ խօսեց Հնդկաստանի՝ ինչպէս և այստեղի նավաբների, քուրուր<sup>1)</sup> ոռուփիների<sup>2)</sup> և կառիների<sup>3)</sup> մասին։ Նրա կինը որ նստած էր տան տիրոջ կողքին, իրան ազատ զգալով՝ լորդի անմիջական ազդեցութիւնից, ցուցամոլութեամբ ի ցոյց էր հանում իր զգեստի ամբողջ շքեղութիւնը։ Նրա բազուկները ընկճում էին թալիսմանների ծանրութեան տակ։ Նրա վիզը կրում էր աւելի ծանր շղթաներ՝ քան այն՝ որ կրում են մեր գերվիշները, նա խմում էր այսքան գինի՝ որքան խմում է մեր շահի ամենակորովի կաքաւչուհին։

Բարեկամական գլխաւոր նշանը, որ անցնում էր իմ և պարոն Հոգի միջև, գինի խմելու արարողութիւնն էր, որով մեծ մասամբ կանոնաւորում է անգլիացիների քաղաքականութիւնը, ինչպէս և նրանց՝ միմեանց հետ ունեցած բարեկամական յարաբերութիւնները։ Անգլիայում մի մարդու հետ գինի խմելը նոյն նշանակութիւնն ունի ինչ ունի մէկի հետ աղ ուտելը Պարսկաստանում։

Հիւրերի հետ գինի խմելով՝ ես բարեկամութիւն հաստատեցի. Նրանք հէնց իրանք էին առաջարկում ինձ գինի խմել իրանց հետ, և այդ ցոյց է տալիս թէ անգլիացիք ինչըմն բարի տրամադրութեամբ են վարւում օտարականի հետ։

Բժիշկն անշուշտ մեծ իմաստութեան տէր մարդ էր. որովհետև ինչ ժամանակ որ նա սկսում էր խօսել՝ բոլորն իրանց ականջները սրած՝ լուրջ ուշադրութեամբ լսում էին նրան։ Սեղանի վրայ բերուող բոլոր կերակուրների մասին նա խօսում, բացատրութիւններ էր տալիս։ Մի քանիսը, նա ասում էր, բոլորովին արգելեալ պիտի համարուեն. մի քանի ուրիշ տեսակների մասին էլ ասում էր թէ շատ բիչ պիտի ուտել. երկու տեսակը միայն նա վաւերացնում էր որպէս անմսաս ուտելիք։ Սակայն զարմանալին այն է, որ ինքն ամեն տեսակիցն էլ անուշ արաւ, և նրա խօսքերն կարծես ամենակին ազդեցութիւն չունեցան հիւրերի վրայ. որովհետև նրանք կերան իրանց սիրած կերակուրները։

Նա՝ այդ բժիշկը զանազան հարցեր տուեց ինձ պարսկական կերակուրների վերաբերմամբ. նա մի բիչ էլ հեռու դնաց՝ հե-

1) Հնդկական քուրուրը 10 միլիոն է, իսկ պարսկականը՝ 1/2 միլիոն։  
2) Ռուփին Հնդկաստանի արծաթ դրամ է, որը այժմ հաւասար է 4 պարսկական դրամին։ 3) Մի տեսակ մոտ համեմետերով կերակուր (խոռիշ) է, որ ուտում են՝ անիւղ բրինձի հետ։ Չուկից և ընդեղէնից էլ են պատրաստում այդ կերակուրը։

Մ. Թ.

տաքրքրուելով թէ խանգարուած ստամոքսի համար՝ Պարսկաստանում մենք ինչ դեղ ենք գործ ածում: Ես շուարեցի, չէի հասկանում ինչ պատասխան տալ նրան: Ես մի քանի փորձեր արեցի միտքս անզլերէնով բացատրել. սակայն ոչ ոք չհասկացաւ ինձ: Ե՛լի շուարեցի. բայց խսկոյն յիշեցի թէ Միրզա Ֆիրուզը մի անգամ այս ինչ խանմի հետ անզլերէն խօսելիս ինչ դժուարութեան մէջ էր ձգել իրան. այս, ես յիշեցի այդ և խիստ զգուշացայ:

Վերջը նա խնդրեց մոլլահին որ իմ ասելիքը թարգմանէր, և ես նրան ասացի որ անմարսողութեան դէպքում՝ մենք՝ պարսիկներս ընդհանրապէս գործ ենք ածում դաւտուրը: Պարզ էր որ այս բառի վրայ նա տատանուեց. կարկամուեց, բայց վախինալով որ հիւրերը կարծեն թէ ինքը պարսկերէն չգիտէ՝ նա բժշկին ասաց թէ՝ մենք մեր երկրում գործ ենք ածում ևմեր երկրի սովորութիւնը անմարսողութիւնը անցկացնելու համար: Այս պատասխանն աւելի դժուարացրեց բանը, մինչեւ, վերջապէս, նավվարը օգնութեան հասաւ և բժշկի հարցերին այսպիսի բառերով ու ոճերով պատասխանեց՝ որ ես ոչ գիտէի և ոչ էլ հասկացայ:

Մոլլան այլայլուեց, նա անշուշտ շատ դժգոհ եղաւ իւրանից, և չէր հասկանում ինչ անել. բայց նա յանկարծ շըրջեց իր առջեւ տրուած դատարկ պնակը, և տեսնելով նրա ետեւը գրուած մի քանի բառերը, ուրախացաւ և մի տեսակ յաղթութեասք կամք յայտնեց կարդալ և թարգմանել նրանց: Սակայն նա նախ ստուգեց որ ես չինարէն չգիտէի, ապա ոկսեց երկար թարգմանութիւն և բացատրութիւն տալ, որով նա բաւականութիւն ուուեց բոլորին, համոզեց թէ ինքն ինչքան լաւ չինարէն գիտէր, և միենոյն ժամանակ՝ վերականգնեց իր կորցրած համարումը:

Ընթրիքը վերջանալու վրայ էր: Սպասաւորները շատ բաներ վերցրին սեղանի վրայից և վերջը բերին մի տեսակ բոյսի դալար փայտիկներ<sup>1)</sup>, որոնցից ես չսիրեցի ուտել. բայց տիկին Հոգը շատ խնդրեց և մինչեւ իսկ ստիպեց ինձ մի քիչ վայելել, և որպէսզի ես անպատճառ ուտէի՝ նա հաւաստիացրեց թէ այդ դալար փայտիկները այդ եղանակին շատ և շատ թանկ էին նստել իրանց վրայ:

—Տիկին, ասացի ես, եթէ թանգ բանն ամենալաւն է, եթէ ինչ որ թանգ է՝ պիտի ուտել, ուրեմն աւելի լաւ է թումաններ ուտել. աւելի լաւ է քաշմիրի շալեր ուտել...

1) Ծներեկ է նշանակում:

Լորդը ծիծաղեց իմ այս խօսքի վրայ, և իր բարի զգացումն ապացուցանելու համար՝ մի բաժակ գինի խմեց հետու:

Օրէնսդէտը շատ բաներ հարցրեց մեր օրէնքների վերաբերմամբ, և նա շատ զարդացաւ, երբ իմացաւ որ՝ մուսուլմանները բացի դորանից՝ իչ մի ուրիշ օրինագիրք չունին:

— Բայց անշուշտ, ասաց նա, դուք օրէնսդէտներ և բահանաներ ունիք որովհետև մի երկիր թնջապէս է կարող իր գույթիւնը պահպանել առանց դրանց:

— Մենք ունինք զանազան կարգի մարդիկ, պատասխանեցի ես, որոնք մեր օրէնքների թարգմաններն են. բայց թէ նրանք բահանանմայ, թէ օրէնսդէտ անունն են կրում՝ այդ միենայնն է: Իսկ դուք, պարոն, դուք օրէնք էք իմանում, չէ՞ թնչ օրէնք էք պատմում. խնդրեմ ասացք:

— Ես փաստաբան եմ, ասաց նա:

— Դուք դատաւոր չէք, դուք զագի չէք, հարցրի ես:

— Ո՛չ, պատասխանեց նա, ես զեռ չեմ հասել այդ պաշտօնին ու աստիճանին:

— Ա՛, ուրեմն դուք սպիտակ էշ չէք հեծնում:

Այս հարցիս նա պատասխան չտուեց, և, ինչպէս երեաց, ամաչեց և վշտացաւ, մանաւանդ երբ տեսաւ որ իմ այս բուրջ հարցի վրայ բոլոր հիւրերը սկսեցին ծիծաղել: Ես աշխատեցի նրան հասկացնել որ մեր երկրում սպիտակ էշը, ինչպէս և սպիտակ ջորին հազորագիւտ և թանկագին կենդանիներ համարուելով նրանց հեծնելը մի փառք, մի պատիւ է որ վայելում են գլխաւորապէս մեր մոլլահները:

Երբ ընթրիքը բոլորովին վերջացաւ, կանայքը ըստ սովորութեան դուրս մեկնեցին, իսկ տղամարդիկ մնացին՝ ազատ զինի խմելու ես վեր ելայ սեղանի մօտից, և վճռեցի խօսել այն շամօթիած և մատաղ այծեամիս հետ, որը մինչև այդ բոռոշէին խոյս էր տուել իմ ուշագրութիւնից: Այն, ես վճռեցի խօսել նրա հետ, փորձել թէ արդեօք իմ սիրուն մօրուքը չէ՞ կարող նսեմացնել առպետական խթաններ ունեցող անհաւատ երիտասարդի դեռաբոյս բեխերը:

Գնալով դահլիճ՝ ես գտայ նրան զբաղուած հիւրերի համար շարբաթ (օշարակ) պատրաստելով: Պատեհութիւնից օգտառելով, ես մօտեցայ նրան և ծածկաբար նրա ձեռքը դրի բանաստեղծութեան մի պատճէն՝ որի մէջ ես արտայայտել էի իմ ամենաբուռն սիրոյ զգացումը: Թուղթը նրան տալով ես կեղծեցի որ, իբր թէ դա մի պարսկերէն դաս էր որ ես

գրել էի իրան համար, և ասացի որ, եթէ ինքը չկարողանար կարդալ և հասկանալ՝ ես սիրով կը բացատրէի:

Հստ երեսյթին, նա շատ ուրախացաւ, և հաւաստացրեց որ ինքը մի աշքի ընկնող տեղ կը տար գրան իր ալբոմի մէջ՝ ես չգիտէի թէ ալբոմն ինչ բան է. ոչ էլ խնդրեցի որ նա ինձ բացատրէր. սակայն ես, ենթադրելով որ ալբոմ ասելով նա նշանակում էր իր սիրու կամ ծոցը՝ շատ ուրախացայ, քաջալերուեցի և զլուխս երկնքի աստղերին հասաւ. Ես այնքան երջանիկ զգացի ինձ որ տրամադրուեցի տեղն ու տեղը մամրող մարմինս դանակով կտրատել, որպէսզի նա տեսնէր և զգար թէ ես ինչ բռւռն սիրով էլ սիրում իրան:

Բայց այդ բովէին «Ասպետական խթանը» ներս եկաւ և ինձ սիրաշահելու համար՝ քթախոտ հրամցրեց ինձ. Ես այնքան կասկածանքով էի նայում նրան, որ դժուարանում էր որևէ բան ընդունել նրանից, բայց քանի որ ես զգում էի որ լուսներս Բէսին ինձ է սիրում, ասպարէզը թողի անհաւատին և հեռացայ, չնայած որ տիկին Հոգը և միւս տիկինները շատ ինդրեցին որ ես մնայի դահլիճում և իրանց հետ խաղերով զուարձանայի:

—Ա՛, ասացի ես, դահլիճից դուրս գնալիս, ես արդէն ունեցել եմ իմ խաղը, իմ զուարձութիւնը, և ամենին չեմ ցանկանում ուրիշ խաղերով զբաղուել...

### ԴԼ. ԱՌ.

Հաջի Բաբան նեղութեան մէջ է ընկնում: —Դեսպանը բարկանում է նրա վրա: —Հաջին վախենում է: Անզիայում ջուտով սպասուող ապատամբութիւնից:

Ամբողջ հետևեալ օրը ես զբաղուեցի՝ մտածելով իմ սիրուն Բէսիի մասին և ոտանաւորներ զբելով նրա կատարելութիւնների վրայ: Դեսպանին շատ բիչ տեսայ այդ օրը. որովհետեւ կարծում եմ որ նա էլ զբաղուած էր նոյն մտքերով, նրան էլ մէկը դիւթել էր: Միւս առաւօտը նա ինձ կանչեց իր մօտ: Երբ ես ներկայացայ նրան, նա քայլում էր իր սենեակում ճիշտ այնպէս, ինչպէս անում են ֆրանկները: Նրա ձեռքում կար մէկն այն թերթերից, որ ամեն օր տպւում են Անգլիայում, և որը երկի նա կարգացել էր իր ուսուցչի օկնութեամբ: Հենց որ նրա աչքն ընկաւ վրաս՝ նա որոտաց.

— Ի սէր Ալլահի, ասա ինձ, այս երկրում բացի մեզանից  
ուրիշ պարսկաստանցիներ էլ կան:

— Ես ինչ գիտեմ, ովք դեսպան, ասացի ես. գուցէ կան:

— Ապա ովք է այս մարդը, ասաց նա, իր մատը դնելով  
թերթի վրայ. ովք է այս շան որդին, որը իրան իշխան Հաջի  
Բարա է կոչում: Կարդա, հոգիով սիրես կարդա և տես այս  
ստախօս թերթը ինչ աղտեղութիւն է կերել:

Ես նայեցի թերթին, և այնտեղ դեսպանի ուսուցչի օգ-  
նութեամբ կարդացի մանրամասն նկարագրութիւնը այն ըն-  
թրիքի՝ որին ես մասնակցել էի «խողերի հօր» տանը: Իմ ան-  
ունս այդ թերթում խոշոր տառերով տպուած էր՝ «Նորին» բա-  
րձրութիւն իշխան Հաջի Բարա: Հոգերի տանը՝ նոյն ընթրի-  
քին մասնակցող բոլոր հիւրերի անուններն էլ տպուած էր, և  
բոլորի մասին էլ մանրամասնութեամբ խօսուած: Ես արտա-  
գրեցի այդ տողերը, որպէս զի ունենայի մի նմոյշ այն տար-  
օրինակ սովորութեանը՝ որ յատուկ է անգլիացիներին: Ի՞նչ  
տարօրինակ սովորութիւն. նրանք ամբողջ ժողովրդին յայտ-  
նում են թէ իրանք երբ են ընթրիք արել, ովքեր են իրանց  
հիւրերն եղել և այն: Այդ տեսակ հիւրասիրութեանը ինչ կ'ա-  
սէր վրանաբնակ արաբը, որը իր հիւրի համար մորթում է իր  
ամենապարարտ գառը, իսկ ինքը ցորինի աղանձ է ուտում:

Լրագրում այսպէս էր գրուած:—

«Պարոն և տիկին Հոգերի մեծ խնճոյքը Portland Place-ում:  
Այս նշանաւոր անձնաւորութիւնները մի փառաւոր խնճոյքով  
հիւրասիրեցին նորին բարձրութիւն՝ իշխան Միրզա Հաջի Բա-  
րային: Սեղանը զարդարուած էր այնպիսի բաներով, որոնք  
ծառայում էին որպէս խորհրդաւոր նշան՝ Անգլիայի և Պարս-  
կաստանի միջև դոյութիւն ունեցող բարեկամութեան: Անգլի-  
ացու և պարսկի սիրալիր՝ փոխադարձ վերաբերմունքը, ցոյց  
տուին անգլիական առիւծի<sup>1)</sup> և պարսկական խորշիդի (արե-  
գուկը) համերաշխութիւնը: Աւելորդ է նկարագրել ընթրիքի  
ճոխութիւնը. բաւական է ասել որ դա բաղկացած էր այն բո-  
լոր ուտելիքներից, որոնցից այս սեղանում կարելի է խորտիք-  
ներ պատրաստել: Նորին բարձրութիւնը շատ անուշ արեց: Բո-  
նդ փողոցի պարոնայը Սիսեռ և Լոբի ընկերութեան ձեռքով  
պատրաստուած ամենալարնտիր ծներեկից, որի հարիւրը հինգ  
դինի<sup>\*)</sup> էր նստել: Ի պատիւ նորին բառձրութեան հրաւիրու-

<sup>1)</sup> Մէկ գլուխն 21 շեմինդ կամ 1 պառնդ և մէկ շեմինդ է: Ծ. Թ.

<sup>\*)</sup> Հեղինակը առիւծ (lion) բառն է գործածում. բայց, երևի նշանա-  
կում է lion-unicorn,

ած հիւրերի թւում աչքի էին ընկնում կորդ Սոֆտլին, Ալլ-  
Հէնրին, տիկին Կըրրին և յայտնի չինացի փիլիսոփայ՝ Հօ-Հոն-  
նակ մի քանի ուրիշ հու տուներու:

—Կարջացցիր, վերջացրիր, հարցրեց դեսպանը դառնալով  
ինձ:

—Այն, ասացի ես տատանուելով. կարդացի. այս անգլիա-  
ցիները տարօրինակ սովորութիւն ունին. այս երկրում ոչ ոք  
մի պատառ բան չի կարող ուտել. ժողովուրդն իսկոյն իմանում  
է թէ ինչ կերայ. մեր կերած-խմածը իսկոյն յայտարարում է  
հասարակութեանը աւելի լաւ կերպով քան մեր հաւատի դա-  
ւանանքը մեր մէշիդների կտուրից:

—Վերջապէս, ասաց դեսպանը, չե՞ս խոստովանուիլ ո՞ր  
դու և միմիայն դու ես այն իշխանը, որ այդպէս արժանաւո-  
րապէս կերակրուել է Հոգերի հետ. Գնա, գնա, դու քեզ արժա-  
նի բարեկամներ ես ճարել:

—Ես յանցաւոր չեմ, եթէ մարդիկ ինձ իշխան են անուա-  
նել, ասացի ես. եթէ այս ապուշները, որոնք գրում են ինչ որ  
մտնում է իրանց գլխնելը, կամենան ինձ Միքայէլ հրեշտակ ա-  
նուանել՝ արդեօք ես կարդդ եմ արգելել նրանց:

—Գնա, ասաց նա բարկանալով. գնա և այլս մի խօսիք:  
Մի մարդ որ կեղծ անուան տակ բարեկամներ է ճարում, մի  
մարդ որ իրան արքայորդի է կոչում, մի մարդ որ գաղտնի  
ապրում և կերակրում է պիղծ գաղանների հետ, այդպիսի մար-  
դը արժանի է թնդանօթի բերանին կապուելու: Վերջապէս, ես  
էլ մի մարդ եմ այստեղ. ես չպիտի թոյլ տամ որ մարդիկ ծի-  
ծաղեն մեր մօրուքների վրայ, ինչ է՝ սպահանցի մի սափրիչի  
տղայ ուզում է իրան մեծ անձնաւորութիւն համարել այստեղ:

—Վալմի, բիլլմի, բացականչեցի ես. Ալլահը վկայ է,  
ով դեսպան, Ալլահը գիտէ որ այս բանի մէջ ես ոչինչ յան-  
ցանք չունիմ, ես ոչինչ չեմ արել: Եթէ այս ինչտեղ ընթրելով ես  
յանցանք եմ գործել՝ այժմ ներողութիւն եմ խնդրում: Ես թն-  
չու պիտի մեղագրուեմ, եթէ իմ բարեկամը կրում է պիղծ գա-  
ղանի անունը. Ո՞վ դեսպան, ես յանցաւոր չեմ. յանցաւորը իմ  
չար ճակատագիրն է, որ ինձ բարեկամացըրել է նրա հետ-  
ծիշա է, ես սափրիչի որդի եմ, բայց ախր ինչո՞ւ պիտի թըն-  
դանօթի բերանին կապուեմ. դուք, ով դեսպան, ինչո՞ւ էք այդ-  
քան քամ շափաղաթ<sup>1)</sup> եղել:

Մենք խօսում էինք բաւական բարձր ձայնով, այնպէս  
որ մեր ծառաներից երկու-երեքը մեր ձայնը լսելով՝ հկան-

1) Քիչ շնորհ անում:

սենեակը և կանգնեցին իրանց աղայի առջև. իսկ անգլիացի ուսուցիչը տեսնելով որ փոթորիկը վերահաս էր՝ հեռացաւ գնաց:

—Մաշալմհ, մաշալմհ ծաղրաբար ասաց դեսպանը Սեէդին և Թաղիին. տեսէք, տեսէք, աս շահնդմդէ է. դուք ամենախորին պատկառանքով գլուխ տուէք նրան. էլ հիմա մենք ոչինչ ենք. որա առաջ՝ մենք ամենանուաստների ամենանուաստըն ենք:

—Այդ ի՞նչ խօսքեր են, ասացի ես (ես էլ բարկանալով), ինչո՞ւ էք այդպէս խօսում. թոյլ տուէք ինձ ասել, ով դեսպան, որ եթէ դուք ձեր ժամանակի մեծ մասն անցկացնէիք մեզ հետ ապրելով և քիչ խառնուեէիք անհաւատների հետ, ես չէի պարտաւորուիլ ապաստանարան որոնել Հոգերի մօտ:

—Դու համարձակւո՞ւմ ես այդպիսի դիտողութիւն անել, գոռաց Միրզա Ֆիրուզզը սաստիկ զայրանալով: Դու մոռացել ես թէ ես ով եմ, հա՞. իմացիր, մարդ, քո այն պառաւ կովը գնացե՛լ է, այլես գոյութիւն չունի աշխարհում՝ որ դու նրա թեռվ թռչես, որ դու նրա պաշտպանութեան վրայ վստահելով համարձակուես այդպէս դիրք բռնել իմ առջև, և այդպէս խօսես հետաւ: Դու այլես պաշտպան չունիս, իմացիր այդ: Սափրիչի որդին կարող է իշխան դառնալ Անգլիայում, բայց երբ նա կը վերադառնայ Պարսկաստան՝ այնտեղ շանից էլ պակաս արարած կը համարուի: Գնա, մարդ. գնա քործին և այլես չհամարձակուես ինձ տեսնել:

—Երա՞նի թէ կարողանայի չտեսնել, ասացի ես սենեակից գուրս գնալիս. բայց նա լսեց խօսքս և նրա կատաղութիւնը ամենասուկալի աստիճանի հասաւ: Նա իսկոյն դիմեց իր առջև կանգնած ծառաներին՝ և ասաց.

—Է՞լի խօսում է դա. Սէիդ, բռնիր դրան. բռնիր այդ շան որդուն, Թաղի, բռնիր և կօշիկը հասցրու բերանին: Է՞լ կը խօսես, համ, որոտաց նա դառնալով ինձ, Է՞լ կը խօսես դու՝ որ հօրդ գեօռը ես պղծել եմ...

Եւ նա ինքը վերցրեց կօշիկը, մոլեգնաբար յարձակուեց վրաս, և կօշկի կրունկով երկու-երեք հարուածներ տուեց բերանիս. Սէիդն ու Թաղին էլ ձեռքներս պինդ բռնեցին, ու ես կերայ: Մի քանի հարուածներ ուտելուց յետոյ, ես վաղեցի (ծառաներն էլ ետևիցս) հասայ տան դուռը, բաց արի և ընկայ փողոցը:

«Բայց մրտեղ եմ կարող գնալ, մտածեցի հա. այստեղ ոչ սրբատեղի կայ, ոչ էլ բաղնիք, ուր կարողանում ապաստանուել ինչպէս արի Թէհրանում: Բացի Հոգերից՝ այստեղ մւս եմ

ճանաչում, և եթէ նրանց մօտ երեամ որպէս մի հալածական, փոխանակ որպէս իշխան՝ արդեօք նրանք ինձ կ'ընդհանեն, արդեօք կը թողնե՞ն որ մտնեմ իրանց տունը»:

Մի քանի ժամ ես թափառեցի փողոցներում, մերթ ողբալով իմ դառը վիճակը, մերթ մտածելով Պարսկաստան վերադառնալու՝ որ անհարին էր, և մերթ էլ ոգևորուելով այն յոյսով, որ ապագայում լուսներես Բէսիին տէր կը դառնամ, կը հարստանամ և բոլորովին անկախ կեանք կը վարեմ:

Մինչդեռ ես այդպէս մտածելով հանդարտ բայցում էի զլիսաւոր կ'ողոցներից մէկում, տեսայ մի մեծ զօրախումբ, որը մի քանի թնդանօթների ետևից քաշելով՝ մարշ էր անում առաջ: Թնդանօթների ետևից գնում էր ամենակեղտու անգլիացիներից բաղկացած մի մեծ բազմութիւն, որը հայնոյեանքներով թնդացնում էր օդը, և երբեմն էլ քարերով յարձակում զինուորների վրայ: Ես տեսայ որ մարդկանցից շատերը երկիւղի մէջ են, և շատերն էլ բոլորովին անտարբեր:

— Ի՞նչ խաբար է, հարցը ես մի մարդուց, որը հէնց նոր գուրս էր եկել իր խանութից՝ տեսնելու թէ ինչ էր անցնում:

— Օ՛հ ասաց նա, ես կարծում եմ որ զրանք գնում են մի մարդ ձերբակալելու:

— Միայն մէջ մարդ, բացականչեցի ես, եթէ այդքան մեծ ոյժ է հարկաւոր մէկ մարդ բռնելու համար՝ ուրեմն որքան ոյժ է հարկաւոր մի քաղաք տիրելու համար:

Այս տեսարանն այնպէս զբաղեցրեց միտքս, որ ես բոլորովին մոռացայ իմ թշուառութիւնը. սակայն իսկոյն շտապեցի դէպի տուն, որովհետեւ զգացի որ հարկաւոր էր գեսպանին յայտնել իրերի գրութիւնը:

Իր ուղարկած Փիրմաններով Շահը խիստ կերպով պատուիրել էր դեսպանին՝ քննել, ստուգել թէ՝ Անգլիան ի՞նչ միշնցներով է պահպանում իր գոյութիւնը: Ես մտածեցի որ այդպիսի մի հրաման ստանալուց յիտոյ, շատ ամօթալի և դատապարտելի անհոգութիւն կը լինէր, եթէ նրան չտեղեկացնէինք այն հանգամանքը, որից երեսում էր որ Անգլիան տակն ու վըրայ է լինելու:

«Ես կը գնամ կը յայտնեմ միրգա Ֆիրուզին», մտածեցի ես, «գուցի նա մոռանայ իմ յանցանքը և կրկին ինձ իր շնորհաց շուրբին տակ ընդունի: Ցամենայն դէպս, ես նրան կ'ասեմ թէ այս երկիրն ինչ գրութեան մէջ է, այս, կ'ասեմ թէկուզ նա մի քանի հարուածներ էլ կրկին հասցնի բերանիս: Ես կը հասկացնեմ նրան որ եթէ այս ապստամբութեան առաջը չառ-

նուի՝ ինքը շուտով կը պարտաւորուի հոգով մեր կեանքի փրկութեան համար...»

Ես շուտով տուն հասայ, բայց դեսպանը տանը չէր։ Հայրենակիցներս ժամանակ առ ժամանակ այնքան ծեծ էին կերել, այնքան յաճախ կօշի կրոնիների հարուածներ էին ստացել իրանց բերաններին, այնքան հայհոյանքներ էին լսել, որ նրանց աշբում մի մեծ բան չէր երևացել իս ծեծ ուտելը. միայն Մոհամէդ բէզն էր որ ցաւակցում էր ինձ։ Ես ու նա երկար խօսեցինք, և երկուսս էլ հոգոց հանելով ասացինք՝ «Երանի այն օրը երբ մենք կըկին իրան կը վերադառնանք անփորձ և անվտանգ»։

Երբ ես Մոհամէդ բէզին ասացի թէ փողոցում ինչեր էի տեսել, և որ իմ տեսածներից պարզ էր որ մի խան կամ քաղաքագլուխ ապստամբուել էր և կարող էր պատահել որ մենք էլ մեծ վտանգի մէջ ընկնէինք՝ նրա երեսի գոյնը թռաւ, դեղնեց և, երկու-երեր անգամ «ասթաֆօրալլահ» ասաց։

—Ես վախենում եմ, ասաց նա. երեխ շատ շարաբաստ էր այն ժամը՝ երբ մենք մեկնեցինք անհաւատ Իզմիրից. ես միշտ յեշել եմ որ եթէ մենք մէկ շաբաթ էլ աւելի մնայինք այնտեղ, երկնքում տեղի կ'ունենար մոլորակների ամենայաջող հանդիպաւորութիւնը, սակայն այդ անպիտան մէհմանդարը—անիծեմ նրա մօրուքը—արհամարհնելով ամեն օրէնք՝ թէ երկնային թէ երկրային՝ մեղ շտապեցրեց և մենք վաղաժամ հեռացանք այնտեղից։ Դէ, հիմա տես թէ ինչ փորձանքի ենք հանդիպում, թէ ինչպէս երեւում է՝ մենք այստեղ կամ պիտի զոհուենք կամ թէ չէ գերի ընկնենք յաղթողների ձեռքը։ Ապա ինչ կ'անենք մենք, մենք, զաջի. դու թնչ ես մտածում։

Ես աշխատեցի սիրո տալ նրան, հաւաստիացնելով որ վտանգն այնքան էլ սարսափելի չէր որքան ինքն էր կարծում, և աւելացրի որ Անգլիայի Շահը իր իշխանութեան տակ մեծ ոյժ ունենալով—նաւերի և թնդանօթների տէր լինելով՝ անշոշտ կարող էր ճնշել, յաղթիկ ապստամբ խանին, որը խոռվութիւն էր ձգել երկրի մէջ։ Ես ասացի որ, եթէ թագաւորը կարողանար մի անգամ բռնել այդ ապստամբին և գլխատէր նրան՝ և նրա կանանց, նրա երեխաներին և աղքականներին սպանել տար՝ ինչպէս այդպիսի դէպքերում անում են մեր երկում, այն ժամանակ անշուշտ ամեն բան իր նախկին խաղաղ դրութիւնը կըստանար։

—Ինչալման, ինչալման բացականչեց Մոհամէդ բէզը մի խոր հոգոց հանելով։

ԴԼ. Խ.

Հաջի Բարձան հաշտուում է Միքրա Ֆերուզի հետո—Անգլիակի դրութեան եւ  
նրա ֆինանսայան ապանուլութեան վերաբերմանը Հաջին խոսելով երկիւր  
է ձգում գլուպանի սիրտը:

Հէնց որ դեսպանը տուն վերադարձաւ, Մոհամէդ բէզը<sup>1</sup>  
(ինչպէս մենք իրար հետ վերջացրել էինք) կանգնեց նրա ա-  
ռաջ՝ և հաշտեցուցիչ խօսքերով նրան յայտնեց որ ես՝ Հաջի  
Բարձան մի շատ կարեռ բան ունէի նրան յայտնելու:

Առաւոտեան բոլոր զայրոյթն անցել էր նրանից, և այժմ  
նրա միտքն զրադուում էր իր թշնամու ու ախացուցիչ յիշողու-  
թեամբ, որը գործում էր նրա տրամադրութեան վրայ այնպէս՝  
ինչպէս փայլուն արեկի ճառագայթները գործում են մի քարայ-  
րի խոնաւութեան վրայ: Նա այժմ բոլորովին հանգստացած՝ և  
տրամադրութիւնը շատ լաւ էր:

—Ի՞նչ է պատահել, ի՞նչ կայ Հաջի, հարցըրեց նա.

—Զեր լսդմաթին արգ եմ անում, որ այսօր ես տեսել եմ  
մի քանի բաներ, որոնց մասին հարկաւոր է դուք տեղեկու-  
թիւն ունենաք: Այստեղ մարդիկ ապստամբուել են, զօրքեր են  
հասել, թնդանօթներ են բերուել և պարզ երևում է, որ շու-  
տով քաղաքի մէջ ընկնելու է մի խոռվութիւն՝ որից աղատուե-  
լու համար մեզ հարկաւոր է Ալլահի օգնութեամբ մի միջոց  
գտնել:

—Հէնց մյու էր քո ասելիքը, ասաց դեսպանը՝ հեգնու-  
թեամբ իր ցուցամատը բարձրացնելով: Այս, բարիքալլահ, այ  
բարիքալլահ իշխանն, դու դիտող մարզ ես, դու հասկանում ես  
իրերի դրութիւնը. բայց միթէ կարծում ես թէ այս անհաւատ-  
ները մեզ պէս մարդիկ են, միթէ չգիտես որ նրանց զիկներին  
սազող գլխարկները չեն կարող սազել մեր գլխին:

—Մենք ի՞նչ գիտենք, ասաց Մոհամէդ բէզը իմ կողմը  
ըստնելով: Ապստամբը՝ ապստամբ է. ի՞նչ երկրում էլ լինի՝ նա  
ապստամբ է, և մի մարդու գլուխ կարող է թոշել մի անհա-  
ւատի սրով՝ ինչպէս և մի ճշմարիտ հաւատացեալի:

—Գնացէք, գնացէք, հանգիստ եղէք, ասաց դեսպանը.  
ի՞նչ էլ որ պատահելու լինի անգլիացիներին՝ մեզ ոչինչ չէ  
պատահելու, մեղ համար ոչինչ փանդ չկայ, ես երկար խօ-  
սակցութիւն եմ ունեցել վէզրի հետ, և նա ինձ հասկացրել է,  
որ այս տեղ յաճախ տեղի ունեցող խսովութիւնները շատ հար-  
կաւոր են երկրի լաւութեան համար...

— Թերեւա բոլոր երկրներում էլ այդպէս է, ասացի ես: Աղա Մոհամէդ Շահի բարբարոսութիւնները անտանելի դարձաւ պարսիկների համար և նրանք սպանեցին նրան: Մենք եկել ենք այստեղ դաշինքներ փակելու Անգլիայի թագաւորի հետ, բայց եթէ նրա էլ սպանուելու լինի, մենք ինչպէս իմանանք որ նրա յաջորդը կը վաւերացնի այդ դաշինքները: Նախքան աւելի առաջ գնալու, ես՝ որ ձեր ծառաներից ամենանուաստն եմ, ձեզ խորհուրդ եմ տալիս որ աւելի մօտից, աւելի լուրջ հետաքրքրութեամբ քննէք այս երկրի դրութիւնը և միենոյն ժամանակ լաւ իմանանք թէ Շահի գահը ինչքան հաստատութիւն կարող է ունենալ:

— Դու վատ չես խօսում, ասաց Միրզա Ֆիրուզը: Ո՞ւր է մէհմանդարը. աւելի լաւ է որ նրանից իմանանք թէ ինչ են նշանակում այդ բոլոր բանները, և ինչ որ նա կ'ասի՝ դու պիտի նոյնութեամբ գրես և եկող փոստով կ'ուղարկենք Շահին: Մենք մանրամասնութեամբ կը գրենք պատահած բանների մասսին, իսկ այս երկրի կառավարութեան մասին մեր հաղորդեմը մի քանի խօսքերով կ'ամփոփենք:

— Իսկապէս, ով Միրզա, հարկաւոր է որ մեր աչքերը լաւ բաց պահենք, ասացի ես. որովհետև բացի ապստամբութեան նշաններից որ այստեղ երկում են, ես նաև լսել եմ, որ այս երկիրը ճնշւում է այնքան ծանր պարտքի տակ, և պարտատէրերը այնքան աղմուկ են հանում իրանց փողերն յետ ստանալու համար, որ շուտ կամ ուշ այստեղի կառավարութեան ամբողջ կազմը պիտի քայլայուի: Փող պարտք տուղները գլուխ կը բարձրացնեն և իրանց փողերը յետ կըստանան ամենալաւ ձևովը որ կարող են:

— Այդպէս, ինչ ես ասում, այս ինչ խարար է. միթէ այստեղի կառավարութիւնն այդ տեսակ է. ես ապշում եմ. ես չեմ հասկանում. թէ ինչպէս է կարելի որ մի պետութիւն պարտքի տակ ընկնի ու ճնշուի: Թագաւորը ժողովրդից առնում է ինչ՝ որ իրան հարկաւոր է, և, բանին վերջ: Ի սէ՛ր Ալլահի, գնա, Հաջի և էլի հետաքրքրուիր:

Այդ բոպէին մէհմանդարը ներս մտաւ և դեսպանի հարցերի կարկուտն այնքան զարմացրեց նրան, որ նա շփոթուեց և նմանուեց խօսելու և շնչելու կարողութիւնից զրկուած զրասոյզ մարդուն:

— Մահմադէ ման<sup>1</sup>), ասաց դեսպանը, ի սէ՛ր ձեր մօր՝ ասացէք, ինչ խարար է, այս ինչե՞ր ենք լսում. միթէ ձեր կա-

1) Իմ պարոն, տէ՛ք իմ: Մ. Թ.

ռավարութիւնը վայր է վերժյ է սղել, միթէ ձեր խաները ապստամբուել են, միթէ ձեր ժողովուրդը խելագարուել է: Ի՞նչ է պատճառը որ այդքան զօրք ու թնդանօթներ են բերուել այս քաղաքը: Սուս բան է այն՝ որ ասում են թէ այդ բոլոր պատրաստութիւնները տեսնում են միայն մէկ մարդ բռնելու համար: Արդեօք ճիշտ է որ ձեր Շահը այնպիսի մի գրութեան մէջ է եղել, որ չի իմանում որտեղ դնի իր գլուխը: Արդեօք ձեր վէզլնները կ՞րցցել են իրանց խելքը, յիմարտցել են. Ի՞նչ է նշանակում ձեր այս մեծ պարտքը, ի սէ՛ր Ալլահի, ասացէք, հասկացրէք ինչ որ գիտէք. իմ Շահը գլուխս կը կտրի, եթէ այս երկրի գրութեան մասին նրան զրելիս՝ ամենափոքրիկ բանը զանցառութեան տամ:

Դեսպանի այս խօսքերը լսելուց յետոյ, մէհմանդարը փոխանակ տրտմելու իր երկրի վիճակը ցոյց տուող այս տիտուր պատկերի վրայ՝ ընդհակառակն սկսեց այնպէս կուշտ-կուշտ ծիծաղել, որ ես շուարեցի և ընկճուեցի, որովհետև դեսպանի այդ հարցերը իմ՝ նրան տուած տեղեկութիւններից էին առաջացել:

—Շատ ճշմարիտ է, ասաց մէհմանդարը, որ այս զօրքերն ու թնդանօթները բերուել են քաղաքի մէջ ձեր լսած մէկ մարդին ձերքակալելու նպատակով: Այդ մարդի ձերքակալումն հաւանականաբար կը յուզի ժողովրդին և մեծ խոռվութեան պատճառ կը դառնայ, հետևապէս զօրք ու զէնը հարկաւոր է այդպիսի խոռվութեան առաջն առնելու համար: Բայց դուք, պարոն գեսպան, հանդիստ մնացէք. այս այն տեսակ ապստամբութիւնից չէ, որ երբեմն լինում է ձեր երկրում, ուր մի խան իր ցեղի գլուխն անցնելով՝ չէ ճանաչում իր շահի իրաւասացութիւնը և եաղի է դուրս գալիս նրա զօրութեան առաջ: Եւ...

—Այդ կարող է ճշմարիտ լինել, ասաց զեսպանն ընդհատելով մէհմանդարի խօսքը. բայց ձեր պարտքը—այն փհղը, որ ձեր կառավարութիւնը պարտական է—ի՞նչ կ'ասէք զրա մասին: Եթէ իսկապէս այդպիսի մի մեծ պարտք կայ ուրեմն ձեր թագաւորը ինչպէս է կարող կատարել իր խոստումները, որ արել է Պարսկաստանին:

—Մեր պմբուքը, ասաց մեհմանդարը զարմանալով. Ի՞նչ պարտք, ի՞նչ էք ուզում ասել:

—Այս, պարոն, ձեր պարտքը, ասաց գեսպանը. խոստովանեցէք դուք որ ձեր կառավարութիւնը ծանր պարտքի տակ ճնշուում է,

— Ճիշտ է, մեր կառավարութիւնը մեծ պարտք ունի, շատ մեծ, շատ ծանր պարտք:

— Ահա, տեսէք դուք խոսառվանում էք այդ, ասաց դես պանը հրճուելով. մենք այնպիսի ապուշներ էլ չենք, ինչպէս դուք էք համարում մեզ: Ճիշտ է, թէպէտ մենք ովարսիկ ենք և ապրում ենք լինելու, այնուամենայնիւ մենք լաւ ծանօթ ենք աշխարհի բոլոր գործերին: Մենք անմիտ մարդիք չենք, հաւատացէք պարոն: Մի կարծիք, որ մենք մտածել չենք կարող. պարսիկներն այնքան էլ լիմար էշեր չեն, ինչպէս դուք էք կարծում:

— Ա՛, այդ կարող է ճշմարիտ լինել, ասաց մէհմանդարը. բայց դա ի՞նչ կապ ունի մեր պարտքի հետ:

— Շատ կապ ունի. ասաց Միրզա Թիրուղը: Մեզ մի քանի բացատրութիւններ են հարկաւոր. ասացէք խնդրեմ, ձեր ազգի պարտքն որքան է համարում:

— Ի՞նչ բացատրութիւններ որ ուզում էք՝ կըստանաք, ասաց մէհմանդարը. բայց կարծում եմ, որ պարսկերէն լեզում չկան այնպիսի բառեր, որով կարելի լինի հասկացնել թէ՝ մեր պարտքի գումարը որքան է, բայց սպասէք տեսնեմ. կարծում եմ դա կը լինի հարիւր և քսան հազար քուրուր թուման:

— Ալլահ, Ալլահ, բացականչեցինք մենք միաձայն: Այդքան պարտք չի կարող լինել ասաց դեսպանը, այդ անկարելի է. այդպիսի մի մեծ անհեթեթութիւն չի կարող մտնել մարդուածքի մէջ: Է՛, պարոն, մենք պարսիկներ ենք, էշեր չենք, պարտք չի կարող լինել:

— Բայց ես էլ ասում եմ. որ այդ ճշմարիտ է. ճիշտ այդքան է, պնդեց Մէհմանդարը:

— Դեկի քաղաքից Նադիրշահի հանած բոլոր գանձերը, Սեֆիխների ինչպէս և Խոսնխորի բոլոր հարստութիւնները և դրանց վրայ աւելացրած մեր Ներկայ Շահի բոլոր փողերն ու գոհարները—այդ բոլորը գումարած՝ այդքան փող չէ կարող դառնալ:

Սնգլիան պիտի նուածի բոլոր աշխարհը և բոլոր երկիրների եկամուտներն ինքն պիտի վերցնի՝ որպէս զի կարողանայ իր այդ մեծ անհաւատամլի պարտքը վճարել:

— Բայց, ասաց մեհմանդարը, մենք չենք ցանկանում, որ ամբողջ պարտքը վճարուի. այդպիսի բանը մենք ազգային դժբախտութիւն ենք համարում: Եթէ այդպէս լինի, մենք կը պարտաւորուենք մեր սեպհական դրամերը գետնի տակ թաղել, ինչպէս դուք անում էք Պարսկաստանում, կամ ապրել մեր ճակատի

դառն քրտինքով՝ գետին հերկելով։ Այդպիսի դէպքում՝ փող ունենալը մարդուս մեծ դժուարութիւն կը պատճառէր. մենք մէկը չէինք ունենալ որ մեր փողը մեզ համար պահէր. ինչպէս այժմ ունինք, և միւնոյն ժամանակ մեզ տարեկան մի որոշ գու մար տար՝ նրա համար՝ որ մենք իրան թոյլ ենք տալիս մեր փողը պահել…

—Այսպիսի գաղափարներ, ճիշտն ասած, դուրս են մեր խելքից, ասաց գեսպանն ինձ և Մոհամէդ բէգին։ Ծանր բեռան տակ ընկնել և միւնոյն ժամանակ այդ բեռան տակ հրճուելը՝ մի բան է, որ ոչ էշը, ոչ ջորին և ոչ էլ ուղտը կ'անի։ Դուք, ասաց նա դառնալով մէհմանդարին՝ երեկի բացառութիւն էք կազմում։

· Յետոյ խաղալով իր մօրուքի ծայրի հետ, և շատ խորը մտածելով՝ նա կրկին և կրկին անգամ բացականչեց.

—Լա իլլահ իլ Ալլահ, մէկ հարիւր և քսան հաղար քուր թուման պարտք։

Հէնց որ մէհմանդարը գնաց, մենք «կսեցինք մեր զարմանքը ազատ կերպով արտայայտել».

—Այդ մարդը, ասաց Մոհամէդ բէգը, ստախծս է. անտարակոյս նա սուտ է խօսում. նվ է կարող է հաւատալ նրա ասածներին։ Ֆաթ-Ալի խանը—մեր բանաստեղծների թագաւորն անգամ այդպիսի ստեր չէր կարող հնարել. իր երազներում էլ այդպիսի ստեր ասելու փորձ չէր կարող անել. ծշմարիտ է, այս ֆրանկները, բոլորովին տարբեր են մեզանից, բայց կան բաներ՝ որ հաւատալի են, կան բաներ՝ որ բոլորովին անհաւատալի են։ Եթէ մի մարդ ինձ ասի թէ ինքը Դէմավանդ սարի չափ մի մեծ տուն է տեսել, ես իհարկէ չեմ հաւատալ նրան, ոչ ոք էլ չի հաւատալ նրան, այս ստախօս մէհմանդարն էլ չի հաւատալ նրան։ Մենք լսել ենք յիսուն քուրուրի մասին, բայց նվ է կարող ըմբռնել այն մեծ գումարը որ նա է ասում —հարիւր... և... քսան... հաղար... թուման։ Փահ։

—Ճիշտ ես ասում, ճիշտ ես ասում, ասաց գեսպանը. այդ սուտը մենք չպիտի հաղորդենք Շահին։ Մենք արդէն բաւական մեծ անուն ենք վաստակել որպէս առաջնակարդ ստախօսներ, այլևս հարկաւոր չէ որ աւելի մեծ անուն վաստակենք՝ այդպիսի մի սուտ էլ գրելով։ Ես դեռ վախենում եմ որ անգլիացիների նաւերի և թնդանօթների մասին մեր գրածներին էլ չըհաւատան թէհրանում։ Դեռ սպասենք և տեսնենք թէ ցարդ մեր հաղորդած տեղեկութիւնները ինչ ընդունելութիւն են գտնել, ապա համարձակուենք այդպիսի բաների մասին գրել։

որոնք աւելի անհաւատալի կը թուան։ Վերջապէս, մեր գլխները  
մեղ համար աւելի արժէք ունեն, քան այս երկրի ոյժն ու հա-  
րսառութիւնը։

Դեսպանը վերջացրեց իր խօսքերը, մենք հեռացանք նրա  
մօտից, և ես իմ օրագրի մէջ արձանադրեցի օրուայ անցքը։

### ԴԼ. ԽԱՅ.

Պարսիկն իր զնում են տեսարաններ տեսնելու։ — Նույիչի Թնդանօթները։ —  
Հաջի Բաբայի վնասակար բարեկամները։ —

Ժամանակ առ ժամանակ՝ մէհմանդարը դեսպանին տա-  
նում էր զանազան տեղեր՝ սքանչելի բաներ ցոյց տալու։ Ի՞նչ  
ժամանակ էլ որ վերջինս գնում էր այդպիսի տեղեր՝ նա իր  
հետ տանում էր իր մարդկանցից մի երկուախն, բայց ինձ՝  
շատ քիչ անգամ։ Մի անգամ նա ընթրել էր Անգլիայի թագա-  
ժառանգի հետ, և ինչպէս ինքը պատմել էր մեզ, այնտեղ պա-  
լատում աեսել էր այնպիսի շքեղութիւն և փարթամութիւն,  
որի նմանը, ինչպէս մենք լսել էինք, եղել էր միայն Շահ Ար-  
քափի խնճոյքներում։

Թագաւորի միւս որդիներն էլ նրան յաջորդարար հիւրա-  
սիրել էին. մի խօսքով Անգլիայի բոլոր ազնուականները նրան  
հրաւիրել էին իրանց տները. Այժմ մէհմանդարը նրան համո-  
զել էր որ գնար տեսնելու հասարակաց հաստատութիւններից  
մի քանիսը. Որոշուեց մի օր այցելելու Անգլիայի զինարան-  
ներից մէկը։

Երբ հասաւ այդ օրը, ես շատ զարմացայ, երբ նա ինձ  
հրամայեց իր հետ գնալ. Մի քանի դէպքերում ես նկատել  
էի որ նա ցանկացել էր որ ես մոռանայի իր խիստ վարժունքը.  
Ի հարկէ, այս մի շնորհ էր, որը ինձ համոզեց թէ բախտիս  
անիւը մի անգամ ևս սկսում էր դառնալ յաջող ինձ։ Վերջին  
մի քանի օրերի անցքերն այնքան զբաղեցրել էին ինձ, որ ես  
գրեթէ բոլորովին մոռացել էի Հոգերին. բայց այժմ, քանի որ  
արևն սկսում էր կրկին փայլել վրաս՝ ես վճռեցի մի անգամ  
ևս փարձել նպատակիս հասնելու։

Մենք գնացինք Վուլիչ կոչուած մի տեղ, ուր մեզ ընդու-  
նեցին մի քանի նշանաւոր պաշտօնեաներ։ Շինութեանը նայե-  
լով մենք ոչ մի աչքի զարնող բան չտեսանք. բայց, մօրուքս  
վկայ, երբ տեսանք թնդանօթները՝ ապշեցինք։ Մենք տեսանք  
զանազան հաստութեամբ թնդանօթներ, այնքան բազմաթիւ՝

որ եթէ նրանց կողք-կողքի շարելու լինէին՝ կը ծածկէր ամբողջ ճանապարհը՝ թէհրանից մինչև Թաւրիդ. իսկ եթէ նրանք շարուէին իրանց երկարութեամբ՝ մէկը միւսի ետևից՝, օ՛, Ալլահնը միայն գիտէ թէ նրանք որտեղ կը հասնէին:—Գուցէ նրանք կը հասնէին մինչև ոռունսերի հօր գերեզմանը:

—Փա՞ն, փա՞ն, փա՞ն, բացականչեց գեսպանը. Էլ ինչու ասել թէ այս ազգը կը կործանուի. ահաւասիկ, այստեղ այնքան բան կայ, որով կարելի է կառավարութեան պարտքը վճարել և պարտաէլնսերին ուղարկել մինչև ջնանամից էլ դեռ հազար ֆարսաղ դէնը: Գնա, գնա, իմ փոքրիկ քեռի, ասաց նա դառնալով դէպի ինձ, այլևս չխօսենք Անդլիայի մասին: Այսպիսի ազգի բարեկամութիւնը պիտի գնահատել: Եթէ թիւրքը կամ իւզբէզը մի անգամ իմանայ որ Թաթ-Ալի Շահը բարեկամացել է տասն հազար թնդանօթի և տասը միլիօն թնդանօթի գնդակնսերէ տէր մի թագաւորի հետ՝ նա ում շունն է որ համարձակուի չնպատակուել նրան, չնանաչել նրա գերագոյն իշխանութիւնը:

Մէկը միւսի ետևից՝ մեզ շատ սքանչելի բաներ ցոյց տուին, և մենք ձեռքնսերս բերաններիս գրած՝ նայում էինք ակնապիշ՝ «Ճեծելով զարմանքի և հիացմունքի մատները»: Մեզ՝ ծանօթացրին շատ դադանիքների հետ՝ դադանիքներ՝ որոնց մասին մինչև այդ օրը մենք ոչինչ չգիտէինք: Թնդանօթ շինելը մեզ այնքան հեշտ բան երևաց որքան սիզար փաթաթելը: Մենք տեսանք որ երկաթը ջրի պէս հոսում էր ամեն կողմով և դառնում էր թնդանօթ, գնդակ, ձող՝ և ցանկացած ժամանակն էլ՝ մեխ:

Ես յիշատակագրեցի մեր տեսածները. բայց գեսպանն ու ես համաձայն էինք որ զ՞ուր էինք գրում, որովհետև ինչպէս էլ որ գրէինք, ինչքան էլ որ երդուէինք՝ Պարսկաստանում ոչ ոք չպիտի հաւատար մեզ:

Դեսպանին առաջնորդող պաշտօնեամների թւում կար և մի ջանիլ բիոիշ<sup>1</sup>), որը առանձնապէս ինձ հետ էր խօսում, իմ շուրջն էր պատում և աշխատում էր ամեն կերպ յարգել ինձ: Ես վախենում էի որ մի գուցէ իշխանաւորս տեսնի այս գերադասութիւնը որ տրում էր ինձ, հետևապէս աշխատում էի խոյս տալ նրանից:

Ցետոյ ես հասկացայ թէ այդ երիտասարդն ինչու էր առանձնապէս ինձ պատում, որովհետև նա ասաց որ ինքը իմ բարեկամ Հոգի որդին էր:

\*.) Մերուք չունեցող ծ. թ.